# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 փետրվարի 2016 թվականի N 8-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2016թ. հունվարի 27-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելուն համաձայնություն տալու մասին>> N43-Ա որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 68-2.3-(34-37), 68-3.2-(38-42), 68-4.1-(24-27), 68-4.3-(21-33)) անձնագրերը՝ համաձայն NN1-26 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2005 թվականի ապրիլի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> N78-Ա և 2015թվականի սեպտեմբերի 15-ի N118-Ա որոշումները:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

*2016.փետրվարի 1*
*ք. Կապան*